

ԱՐՄԻՆԵ ՊԵՏ ՈՅԱՆ

ԱՆՁԻ ՊԱՇՏԱՍՌՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՏՈՏԱԼԻՏԱՐ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

“Տոտալիտարիզմ” հասկանակացությունը ծնվել և կիրառության մեջ է մտել 20-րդ դարի սկզբին: Բառն առաջին անգամ իրենց հրապարակումներում օգտագործել են իտալացի հակաֆաշիստները: Իտալիան ոչ միայն լույս աշխարհ բերեց “տոտալիտարիզմ” հասկացությունը, այլև հենց ինքը քաղաքական այդ ռեժիմի օրինակ հանդիսացավ՝ հպարտորեն իրեն “տոտալիտար” հայտարարելով: Իսկ 1925թ. հունիսին Բենիտո Մուսոլինին հայտարարեց ֆաշիզմի “անզուսպ տոտալիտար կամքի” մասին¹: Ինչ վերաբերում է խորհրդային Միությանը, ապա այդ տերմինն այստեղ ի հայտ եկավ միայն պետության վերջին շրջանում. մինչ այդ “տոտալիտար” բառը խորհրդային իրականության մեջ օգտագործվում էր քարոզչական նպատակով՝ բնութագրելու համար միայն ֆաշիստական և մինչֆաշիստական քաղաքական ռեժիմները Արևմուտքում:

Կարելի է առանձնացնել տոտալիտար “սինդրոմի” գլխավոր բնութագրիչները. 1. Միակ կուսակցություն՝ օժտված խարիզմատիկ լիդերով: 2. Պաշտոնական գաղափարաբանություն, որը պետք է ընդունվեր բոլորի կողմից: 3. Ձանգվածային տեղեկատվական միջոցների նկատմամբ մենիշխանություն: 4. Տեռորիստական ոստիկանական վերահսկողական համակարգ: 5. Կենտրոնացված վերահսկողություն քաղաքական և հասարակական կյանքի ոլորտում: Տոտալիտարիզմի աշխարհայացքը հիմնաված էր վերոհիշյալ դրույթների վրա: Առկա էր ընդհանուր գործ, կար ընդհանուր գաղափար: Բոլորի համար ճանապարհը մեկն էր՝ նացիոնալ-սոցիալիզմ (ֆաշիստների պարագայում), կամ կոմունիզմ՝ (խորհրդային իրականության մեջ): Ս. Ա. Գրիգորյանը “Ամբողջատիրության սոցիոլոգիա. հայացքը ներսից” հոդվածում գրում է. “Եթե անհատը չի հետևում այդ ակնհայտ կանոններին, նա մոլորվում է: Եթե նա չի ընդունում իր սխալները, ապա նա թշնամի է: Եթե թշնամին չի հանձնվում, նրան պետք է ոչնչացնել”² Այսպես էր ծագում բռնությունը, բռնության աշխարհայացքը, ինչն էլ կազմում էր տոտալիտար աշխարհայացքի անբաժան մասը: Տոտալիտար

¹ Найдорф М., Тоталитаризм и война // Заметки по культурологии тоталитаризма, http://www.countries.ru/library/twenty/culture_of_tofal.htm.

² Григорян С. А., Социология тоталитарности: взгляд изнутри // Тоталитаризм как исторический феномен, сборник статей, М., 1989, էջ 94:

մշակություն խիստ կարևոր էր վստահությունն ու նվիրումը առաջնորդի, պետության, գաղափարների և ամենակարևորը՝ ապագայի նկատմամբ: Ապագայի նկատմամբ վստահությունը զանգվածների ոգեշնչման կարևորագույն գործոնն էր: "Մենք չենք ուզում ուրիշ աստված, բացի Գերմանիայից: Մեզ պետք է ֆանատիզմ հավատի, հույսի և սիրո Գերմանիայի նկատմամբ", - ազդարարում էր Ադոլֆ Հիտլերը³: Տոտալիտարիզմի գլխավոր զենքերից էր պետության աստվածացումը: Տոտալիտար մշակություն մենք տեսնում ենք ինդիվիդի ենթարկումը ինչպես իշխանությանը, այնպես էլ մի գերակա նպատակի, որի իրագործմանն են ձգտում բոլորը, այդ թվում նաև պետությունը: Այս ֆենոմենը և Կոզլովան կոչում է "տոտալիտար միստիկա"⁴: Այսօր, չնայած բազմաթիվ մեկնաբանությունների ու բացատրությունների, պատմության այդ ժամանակաշրջանը շարունակում է տարօրինակ ու մութ երևալ: Ամբողջատիրության պայմաններում պետական ապարատի և կուսակցության սերտաճումն այնքան խորն էր և օրգանական, որ գործընթացի վերջում արդեն անհնար էր դառնում սահմանազատել, թե որտեղ է սկսվում պետությունը և որտեղ ավարտվում կուսակցությունը: Տոտալիտար հասարակությունը բնութագրելու համար պետք է ուշադրություն դարձնել անհատի իշխանությանը ենթարկելու խնդրին: Իհարկե, խոսքը չի գնում միայն առաջնորդին ենթարկվելու մասին, այլ մի ինչ-որ իդեալական սկզբունքին ենթարկվելու մասին: Դա կարող էր լինել որևէ ազգի կամ ռասայի բարձր դերի, կատարյալ քրիստոնեական հավատի գաղափար (Հիտլերի և Ֆրանկոյի պարագայում), կոմունիզմի կառուցման տեսլականը (Ստալինի դեպքում) և այլն: Այսինքն, դրված չէ միայն անհատին ենթարկվելու խնդիրը, այլ մի բարձր գաղափարի և նպատակի, որի համեմատությամբ անհատական կամ խմբային հետաքրքրություններն ուղղակի անհիմաստ են:⁵

Ըստ Նայդորֆի բնորոշման՝ տոտալիտար մշակություն գոյություն ունեն հերոսներ, որոնցից երկու առանցքայինը՝ Իշխանությունը և Առաջնորդն են⁶: Եվ Առաջնորդի, և Իշխանության մշակութային կերպարներն ունեն արխայիկ ակունքներ ու չափազանց կարևոր տեղ են զբաղեցրել մի շարք հին ժողովուրդների մշակութում: Արխայիկ շրջանում կային ուժեր, որոնք օժտված էին

³ Наудорф М., Тоталитаризм как простейшая форма "массовой культуры" // Заметки по культурологии тоталитаризма // http://www.countries.ru/library/twenty/culture_of_tofal.htm.

⁴ Козлова Н. Н., От авторитаризма к тоталитаризму: механизм перехода // Тоталитаризм как исторический феномен, сборник статей, М., 1989, էջ 223

⁵ Козлова Н. Н., էջ 223:

⁶ Наудорф М., Тоталитаризм как простейшая форма "массовой культуры" // Заметки по культурологии тоталитаризма // http://www.countries.ru/library/twenty/culture_of_tofal.htm.

// http://www.countries.ru/library/twenty/culture_of_tofal.htm.

խորհրդավոր ու անհավանական զորությամբ ու մեծ ազդեցություն ունեին շրջապատող աշխարհի վրա: Նման ուժերի կրողներ էին հոգիները, տարբեր աստվածություններ, որոնք օժտված էին հզոր կամքով, խելքով, ուժով և այլ հատկանիշներով, որոնցով տարբերվում էին աշխարհի մնացած օբյեկտներից: Այսպիսով, իշխանության և նրա կրողների սրբայնացման մասին կարելի էր խոսել, երբ իշխանությունը կապված էր այդ բարձրյալ ուժերի հետ, այսինքն՝ այն ժամանակ, երբ իշխանության կրողը կամ ինստիտուտը դիտարկվում էր որպես այդ ուժերի կրողը կամ նրանց կամքն արտահայտողը երկրի վրա⁷:

Այն գաղափարաբանությունը, որ ստեղծվել էր ԽՍՀՄ-ում Ստալինին մեծատիրության շրջանում, բոլոր հիմքերը կան կոչելու տոտալիտար առասպելաբանություն: Սրբազան նշանակություն էր վերագրվում այնպիսի արժեքների, ինչպիսիքն էին՝ մարքսիզմը, կուսակցությունը, սոցիալիզմը, խորհրդային ժողովուրդը: Ինչպես նշում է Ա. Լ. Տոպորկովը, "Անձը պետք է սիրեր ընկեր Ստալինին, հավատար գալիք համաշխարհային հեղափոխությանը, ատել կապիտալիզմը, ժխտել կրոնը՝ նրան վերագրելով կեղծ հունանիզմ"⁸: Գաղափարները, որ հռչակում էր պետությունը, չէր համապատասխանում մարդկանց հանապազօրյա կյանքին: Սակայն տոտալիտար առասպելաբանությունն իր կերպավորումը գտավ խորհրդանշական իրականության մեջ՝ զորահանդեսներում և զանգվածային շքերթներում: Նույնը կարելի է տեսնել ֆաշիստական զորահանդեսներում: Իսկ Միխայիլ Բոննի "Սովորական ֆաշիզմ" ֆիլմում մարզադաշտերում անցկացվող ցույցերը պարզ վկայությունն են վերը նշվածի. հիացական ճիչեր, կանանց աչքերում հիացմունքի արցունքներ՝ ուղղված Դիտլերին, ինչը գրեթե նույն Կարմիր հրապարակի իրադարձությունների կրկնությունն է: Շարքերում կատարվում էր նույնը, երբ տրիբունայում էր հայտնվում Նա՝ հարազատ հայրը, բոլոր ժամանակների ամենաինաստուն առաջնորդը: Ուշագրավ է Լենին Ռիֆենշտալի "Կամքի հաղթանակ" դոկումենտալ ֆիլմում Գերելսի՝ Դիտլերի գովքին ուղղված հերթական ելույթը. "Դուք դա Գերմանիան եք: Երբ Դուք գործում եք, ողջ երկիրն է գործում Ձեզ հետ: Երբ Դուք որոշում եք ընդունում, այն ընդունում է մեր ողջ ազգը":

Սարքսիզմ-լենինիզմը պետք էր ոչ թե իմանալ, այլ հավատալ նրան: Մարքսիզմից հրաժարվելը նշանակում էր ոչ թե համոզմունքների փոփոխում, այլ դավաճանություն: Ինչպես որ ցանկացած միֆոլոգիայի մեջ, տոտալիտար առասպելաբանության մեջ որպես սուրբ գիրք են հանդես գալիս մարքսիզմ-լենինիզմի դասական հատորները, որոնք յուրաքանչյուր գրադարանում զբաղեցնում էին ամենից աչքի ընկնող տեղը: Զուգահեռաբար կարելի է նշել

⁷ Бондаренко Д. М., Сакрализация власти в истории цивилизации, М., 2005, էջ 7:

⁸ Топорков А. Л., Мифы и мифология 20-ого века: традиция и современное восприятие// <http://www.ruthenia.ru/folklore/toporkov1.htm>:

նաև Հիտլերի կողմից բանտում գրած “ Իմ պայքարը” գիրքը, որը սեղանի գիրք էր դարձել գերմանացիների համար:

Խորհրդային գաղափարաբանության մեջ մեծ կարևորություն էր տրվում Լենինի ծննդյան օրվան, Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձին: Յուրաքանչյուր քաղաքում պետք է կանգնեցված լիներ Լենինի արձանը, և դա խորհրդանշում էր նրա ուսմունքի անսասանությունն ու հավերժությունը: Իսկ նրա դամբարանը դարձավ մահը հաղթահարելու, անձնական անմահությունը նյութականացնելու վառ օրինակ: Ի դեպ, առասպելաբանական տեսանկյունից բավականին հետաքրքրական դիտարկում է կատարել Լ. Աբրահամյանը՝ կապված խորհրդային որոշ առաջնորդների հետ և Լենինի մի շարք առանձնահատկություններ համապատասխանեցնում տրիքստերի ավանդական կերպարին՝ անշուշտ չփորձելով արդարացնել նրա ոճրագործ արարքները: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Լենինի վարած նոր տնտեսական քաղաքականությունը կարող էր ԽՍՀՄ-ը տանել այլ ուղիով, և Ստալինի, շնորհիվ էր, որ երկիրը բռնեց տոտալիտարիզմի ուղին: Շատերը մինչև այժմ հավատում են, որ եթե կենդանի լիներ Լենինը, անպայման կգտներ ինչ-որ մի ելք, ինչը հատուկ է տրիքստերին: Նա միշտ կարողանում էր պահի ընտրության հարցում ճիշտ կողմնորոշվել: Իհարկե ոչ պաշտոնական, այլ ըստ բանահյուսական որոշ տվյալների ցանկացած հաջողությունից հետո Լենինը ձեռքով հարվածում էր ծնկներին և բացականշում. “Հաջողվեց, հաջողվեց”: Փաստորեն, եթե հիմք ընդունենք ժողովրդական բանավոր տվյալները, կարող ենք ասել, որ նա հերթական անգամ ցնծում էր իր հաջողված տրյունկի առիթով: Կարողանում էր գտնել թույլ օղակը և հարվածել ճիշտ կետին՝ ի տարբերություն Գորբաչովի, որը չնայած իր անսահման ցանկությանը, չկարողացավ պահել Լենինի կողմից արդեն ստեղծված կայսրությունը: Իսկ Գորբաչովի կերպարը, ըստ Լ. Աբրահամյանի, համապատասխանում է առասպելական հիմարին, որը տրիքստերի հակառակ բևեռում է⁹: Ընդհանրապես Լենինի բոլոր իրավահաջորդները որևէ հատկանիշ ժառանգում էին իրենց նախապապից: Իրոք նա նախնի էր, իմաստուն ծերուկ, կամ, այսպես կոչված, “Լենին պապի”, չնայած նա 54 տարեկանում է վախճանվել, իսկ կուսակցական մականունը “ծերուկ” էր: Կանոնիկ լենինիզմի տեսանկյունից Լենինն արարիչ է բառի բուն իմաստով: Հատկապես պատանիների պատկերացումներում Լենինը ամենատեղծ էակ է, և նրա նկատմամբ ունեցած պաշտամունքը հաճախ կարող էր ամենաանհավանական հեռուները տանել: Օրինակ, Ա. Մ. Ս-ն (1952թ. ծնված) ասում է. “Երբ փոքր էինք, հետաքրքրվում էինք մեծ առաջնորդի կենսագրությամբ, և երբ հարց առաջացավ ինձ մոտ, թե ինչու Լենին պապիկը երեխաներ չի ունեցել,

⁹ Абрамян Л. А., Ленин как трикстер, <http://www.ruthenia.ru/folklore/abramyan1.htm> :

մեր հարցասիրությունը բավարարեցին ասելով, որ ժամանակ չի ունեցել: Եվ դա այնքան համոզիչ էր հնչում այն ժամանակ մեզ համար, որ իսկապես կարծում էինք, թե պետության գործերն այնքան էին ծանրացել նրա ուսերին, որ չէր կարող երեխա ունենալ¹⁰: Իհարկե արդեն հետխորհրդային տարիներին բազմաթիվ փաստարկներ բերվեցին նրա վեներական հիվանդությամբ տառապելու, իր կնոջ՝ հեղափոխական գործիչ Ն. Կրուպսկայայի հետ միայն փոխադարձ հարգանքով պայմանավորված ընտանիք ունենալու մասին: Մինչդեռ Լենինը սիրահարված է եղել ծննդով ֆրանսիացի մի գեղեցկուհու՝ Ինեսսա Արմանդին, որը, դեռ վաղ մանկության ժամանակ տեղափոխած լինելով Ռուսաստան, հետագայում նվիրվել էր կոմունիստական գաղափարախոսությանը և սոցիալիստական հեղափոխության գործին: Սակայն նրանց կապը արգելված է եղել զինակից ընկերների կողմից և շատ հավանական է, որ այս հանգամանքով է պայմանավորված Լենինի անզավակությունը: Խորհրդային այն սերունդը, որը կուրորեն հավատում էր Լենինի գաղափարներին ու պաշտում նրան՝ որպես արարիչ, դժվար թե կարողանար հավատալ այս ամենին: Զետաքրքրականը հենց այն հակասություններն են, որոնք պատում են մեծ առաջնորդին: Սա ցուցադրում է նրա հանելուկային բնույթը. այն, որ մշտապես դիմելով տրյուկներին՝ կարողանում էր պատրանք ստեղծել ու մարդկանց համոզել հակառակում: Ձարմանալին այն է, որ նրա տրյուկները չեն դադարում նաև մահից հետո: Այսպես, օրինակ՝ նրա մուսիայի ամեղծվածը: Ըստ տարածված մի կարծիքի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում՝ սիբիրյան էվակուացիայի ժամանակ մուսիան փչացել է, իսկ դամբարանում ցուցադրվող ընդամենը տիկնիկ է¹⁰, փաստորեն առաջնորդի մարմինը, ինչպես և ևս տերը, շարունակում է ապրել իր տրիքստերային օրենքներով:

Մարմնից գատ, հոգին ևս ձևափոխումներ է կրել, ըստ Մայակովսկու հայտնի պոեմի, որը հնչում է այսպես. «Լենինն ապրել է, Լենինն ապրում է, Լենինը կապրի», ու, իհարկե, շատ բնական էր հնչում խորհրդային տարիներին Լենինի հավերժ ապրելը: Լ. Աբրահամյանը 1970-ական թվականների անեկդոտի մի օրինակ է բերում, որը նա քաղել է Ի. Ռասկինի «Խուլիգանություն անող ուղղափառի հանրագիտարանը» գրքից. «Երրորդ համաշխարհային պատերազմից հետո ողջ են մնում միայն երկուսը՝ Բրեժնևը և Ռեյգանը: Վերջինը վերցնում է քարը և ցանկանում սպանել Բրեժնևին, բայց այդ պահին օգնության է գալիս մշտապես կենդանի Լենինը»¹¹: Չնայած մեր օրերում, սկսած վերակառուցման շրջանից, Լենինը ասես կորցրել է իր տրիքստերային բնույթը՝ պահպանելով

¹⁰ Себрянян С., Я памятник себе// Республика Армения 1991, էջ 48, հղված է՝ Абрамян Л., նշվ. աշխ.:

¹¹ Абрамян Л. А., նշվ. աշխ.:

միայն խեղկատակին հատուկ գծերը, որովհետև այսօր թերևս միայն շոունեն-ներն են կերպավորվում Լենինի տեսքով կամ հագնում նրա պատկերով վերնա-շապիկներ:

Լենինին վիճակված էր կարծատև ղեկավարել խառնակ ժամանակնե-րում, ուստի նա չհասցրեց վայելել տոտալիտար տերության առաջնորդի աստվածային բարձունքի հասնելու բերկրանքը: Դա տեղի ունեցավ նրա մահից հետո:

Առաջնորդը նա է, ով օգնում է աշխատավորներին ճիշտ իրականացնել հասարակության պատմական զարգացման օրենքները: Նա է, ով հասկացնում է, որ կա տոտալիտար անհատ, ինչ է նա ուզում և կարողացավ դա վերածել գործնական քայլի: Դա հենց այն մարդն է, ով դառնում է առաջնորդ: Առաջ-նորդը ըմբռնելի է, հասարակ, հասանելի բոլորի համար, որն օժտված է առողջ բանականությամբ: Այդպես է ծնվում առաջնորդի նկատմամբ հավատը: Իսկ առաջնորդը, եթե ուզում է մնալ իր դիրքում, պարտավոր է այդ հավատը պաշտ-պանել, այսինքն՝ վարվել այնպես, ինչպես կամենում է զանգվածը:¹² "Աշխա-տավոր դասը" այն հերոսներն են, ովքեր գոի են մատուցում իրենց համուն ճշմարիտ օրենքների իրականացման:¹³

Նմանօրինակ առաջնորդի պաշտամունք էր ստեղծվել նաև Մուսոլինիի շուրջը: Նրան էին վերագրվում ամենաանհավանական հատկանիշները: Դուչեն գինվորական համազգեստը հագին քլունգով կոտրում է ինչ-որ ժայռաբեկոր կամ վարում է կալսիչ մեքենան: 1939թ. մի նկարում երևում է այն անբաժան ու խորը կապը, որ ուներ Դուչեն ժողովրդի հետ, երբ "պատահական" կերպով անցնելիս ողջունում է հավաքված մայրիկներին և նրանց մանկահասակ զավակներին: Նմանատիպ հանդիպումներից մեկի ժամանակ Մուսոլինի մի կին ծննդաբերում է (պատահաբար այդ կինը աշխարհահռչակ դերասանուհի Սոֆի Լորենի մայրն էր, իսկ ծնված երեխան Լորենի քույրը): Իսկ ծննդաբերող կնոջ միակ երագանքը ծնված երեխային Դուչեի որդու հետ ամուսնացած տեսնելն էր. թերևս բազում իտալացի մայրերի բաղձանքն էր դա: Բայց որքան էլ կյանքը լեցուն լինի անակնկալներով, այնուամենայնիվ զարմանալի է այն հանգա-մանքը, որ Դուչեի ռազմաշունչ ելույթների ներքո լույս աշխարհ եկած դուստրն իրականացրեց մոր բաղձալի ցանկությունը և տարիներ անց, երբ վաղուց արդեն տապալվել էր Մուսոլինիի ռեժիմը, ամուսնացավ Դուչեի որդու հետ: Ասել, թե աստվածայինի հետ հանդիպումը տաճարում (տվյալ դեպքում հան-դիպման հրապարակը) կարող էր նման հրաշագործ հետևանք ունենալ:

¹² Григорян С. А., Социология тоталитарности: взгляд изнутри // Тоталитаризм как исторический феномен, сборник статей, էջ 94:

¹³ Козлова Н. Н., նշվ. աշխ., էջ 225:

Անսահմանափակ էր նաև մեկ այլ հանրահայտ ֆաշիստ առաջնորդի՝ Ֆրանկոյի անձի պաշտամունքը Իսպանիայում, որը կարճ ժամանակում դարձավ «Փառավոր ապստամբության» առաջնորդը, կուսակցության կառուցիլիոն և ողջ Իսպանիայի կուռքը: Սիա, թե ինչ է գրում, «Իսպանիան առանց դիմակի» գրքի հեղինակ էլ էր Պլենը, որը ժամանել էր Իսպանիա Ֆրանկոյի պաշտամունքի ամենաբուռն շրջանում. «Նա ամենուր և ամեն տեղ է՝ հառնելով աչքերիս և մտքերիս. ցանկացած փողոցում, ցանկացած վայրում. թերթերի առաջին էջերին, կինոթատրոնների կրաններին, տրուլեյուսներում, մետրոյի կայարաններում, էժանագին սրճարաններում և ամենահեղինակավոր ռեստորաններում, թե՛ քաղաքներում, թե՛ գյուղերում. առհասարակ ամենուր նա էր»¹⁴:

Երրորդ ռեյխի պաշտամունքային հիերարխիայում կենտրոնական տեղ էր զբաղեցնում Յիտլերը: Նա ամենագո էր և ամենագետ՝ ինչպես Աստված, այդ պատճառով նրա պատվին իրականացվող ծեսերն աստվածային բնույթ ունեն: Նրա պատկերները և կիսանդրիները սրբանկարների արժեք էին ձեռք բերել: Արվեստում ձևավորվում ու զարգանում էր ֆյուրերի պատկերագրությունը՝ որպես կերպարվեստի առանձին ոլորտ: Նրա պատվին ծոնվում էին բանաստեղծություններ, որտեղ նա համեմատվում էր երկնային լուսատուների՝ աստղերի, արևի հետ և այլն¹⁵: Ֆրից ֆոն Ռաբենաուիի բանաստեղծության մեջ Յիտլերը ներկայացված է առասպելաբանորեն, երբ բոլորը քնում են, նա արթուն է և մտածում է Գերմանիայի ճակատագրի մասին, իսկ բանաստեղծության վերջում ֆյուրերը վերածվում է արևի ու ժպտում բոլորին: Ֆյուրերը ճշմարտացիության մարմնավորումն էր, երբ խոսում էր ֆյուրերը, ամեն կարգի սուտ չքանում էր, այդպես է ներկայացնում ֆյուրերին Կարլա Էմիլյա Ուլոֆան իր «Ֆյուրերը խոսում է» բանաստեղծության մեջ: Առաջնակարգ բանաստեղծներ էին համարվում նրանք, ովքեր ամենալավ խոսքերն էին ասել կուսակցության և պետության անփոխարինելի առաջնորդի մասին: Ողջ պոեզիան ներծծված էր ստորաքարշությամբ, պալատական շողոքորթությամբ: Նույն երևույթն առկա էր նաև լրագրության մեջ: Բավական էր, որ առաջնորդը ճառ ասեր, և ողջ մամուլը զբաղված էր նրան գովաբանելով, անընդմեջ, օրեր շարունակ նրա արտահայտած մտքերը մեկնաբանելով՝ վերածելով դրանք հանճարեղ մտորումների: Ֆյուրերի պաշտամունքը այնքան բացարձակ էր և ֆանտաստիկ, որ նրան հավատում էին ոչ միայն շարքային կուսակցականներն ու ժողովուրդը, այլև մյուս պետական և կուսակցական առաջնորդները: Նրանք անկեղծորեն հավատում էին առաջնորդի հանճարին: Այդ մասին ուշագրավ մի շարք տեղեկություններ կան Յիտլերի մտերիմ բարեկամ և ֆաշիստական

¹⁴ Желев Ж., Фашизм. Тоталитарное государство, М., 1991, էջ 173:

¹⁵ Ինչի հետ կարելի է համեմատել, օրինակ, Ն. Չարյանի Ստալինին փառաբանող հայտնի բանաստեղծությունը, որը դպրոցականները պարտադիր անգիր էին սովորում:

Գերմանիայի նախարարներից մեկի՝ Ալբերտ Շպեերի՝ Նյուրբերգյան դատավարությունից հետո բանտում անցկացրած տարիներին շարադրած «Չիշողություններում»։ Այդ առումով հետաքրքիր է բժիշկ Ռիբենտրոպի վերաբերմունքը Չիտլերի նկատմամբ։ Նրա տրամադրությունը, ըստ Շպեերի, կարող էր անմիջական կապ ունենալ այն հանգամանքի հետ, թե ինչպես էր Չիտլերը վերաբերվել նրան այդ օրը, ասենք ժպտացել էր, գովաբանել, թե խիստ հայացքով նայել։ Առաջնորդի հետ հանդիպումը նրան դարձնում էր շատ կենսուրախ ու շիվոդ, չնայած բնույթով մռայլ էր ու չհաղորդակցվող։

Թեև ֆաշիստական, թեև կոմունիստական պետություններում կուսակցական հիերարխիկ համակարգի գլուխ կանգնած է առաջնորդը, որ միակ ու բացարձակ հեղինակություն է։ Բացի աստվածացվող առաջնորդից, տոտալիտար պետություններում իրական քաղաքական հեղինակություններ չկան։ Դրանց փոխարեն կային կուսակցական բյուրոկրատական հիերարխիայի ներկայացուցիչներ, որոնց անհատական կարևորության աստիճանը կախված է հիերարխիկ առումով առաջնորդին մոտ լինելուց։ Ուստի կարիերային առաջխաղացման միակ ճանապարհը դա հիերարխիկ բոլոր աստիճանների հաղթահարումն է, մինչև «հեղինակություն» դառնալը, պետք էր նախ բյուրոկրատական մեքենայի մի մաս դառնալ։

Ակնհայտ է, որ բացակայող իրական հեղինակությունների փոխարեն տոտալիտար պետությունը ստեղծում է նրանց փոխարինող ուժեղ քարոզչական ապարատ, որի օգնությամբ պետությունն ինքն էր թելադրում առաջնորդի կերպարի ստեղծման համար անհրաժեշտ գաղափարներ և կարծրատիպեր, որոնք ժողովրդական յուրովի մեկնաբանությամբ և ընկալմամբ դառնում են մի ամբողջ առասպելաբանություն, իրողություն, որի հետևանքով առաջնորդին վերագրվում էին զանազան անհավանական հատկանիշներ և արարքներ։ Առասպելաբանության մասն են կազմում առաջնորդներին ձոնվող բազմաթիվ բանաստեղծությունները, երգերը, արվեստի այլ ստեղծագործությունները, որոնք գովերգում էին առաջնորդների առասպելական հատկությունները՝ խիզախությունը, խելքն ու աննկուն կամքը։